

Հ Ն Չ Ա Կ

ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գ. ՏԱՐԻ

ԼԱՑՈՐ Ե

1887 ԴԵԿՏԵՄԲԵՐ 25

ԹԻՒ 7



Ի ՍԴԱԼԻ ՄԱՀ

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՅ. ՍՊԱՐԹԱԼԵՂՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐԻ

« Կառնարեալ ի սակաւում , ելից զժամանակս երկայնս . »
Դիլք Խմաստութեան .

1887 ԴԵԿ. 22 ԵՐԵՎԱՆԻ ՕՐԸ ԶԺԻՆՆԻՅԱՅՆ ԵԿԱԾ
ՀԵՌԱԳԻՐ ՄԻ ԿԱՅԺԱԿԻ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԻ ԳՈՒԺԵՅ ՎԱԵՄ.
ՍԿԱՐԹԱԼԵԱՆ ԷՖԷՆՏԻՐԻ ԵՄԵԼԱՐԺԱԿԱՆ Լ ԳԱՆԱՈՒԹ ԺԱ-

հրն, և համայն Հայութեան սիրտն համակեց ի խոր սուգ և ի թախիծ :

Վսեմ. Օտեան էֆէնտիի մահուանէն յետոյ այս երկրորդ անդարմանելի կորուստն է զոր Հայ ազգը կընէ իւր ամենէն մեծարելի և ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐԻ տիագոսին իրաւամբ արժանացեալ Զմիւռնաքնակ մեծանուն ազգայնոյն տարաժամ մահուամբ : Կորուստ անդարմանելի արդարեւ, երբ յիշուի թէ հոգեւոյս հանգուցելոյն անձնաւարութիւնը վերջին երկոտասան ամաց մէջ երջանկայիշատակ ԳԱԶԱԶ Ամիրայի մարմնացումն հանդիսացած էր, և ողորմասիրութեան ու ազգասիրութեան նախանձելի ասպարէզին մէջ ճշմարիտ հետեւող մը՝ մեծանուն Ամիրային մեծագործութեանց :

Դարեր պէտք են այսպիսի անձնաւորութիւններ յաւուցանելու համար, որք աշխարհային փարթամութեանց հետ գիտնան միացնել և սրտի փարթամութիւնն, և յետ մահու իրենց ազգայնոց սրտին մէջ յաւե՛տ ապրելու հընարը գտնել :

Այսպիսի անձնաւորութիւններ էին երկոքին ողբացեալ հարազատք, Թագաւոր և Յովհաննէս էֆէնտիք Սպարթալեան, որոց առաջնոյն վշտալի մահը գէթ մխիթարութիւն մը թողած էր ազգին իւր հարազատ եղբայրն. բայց ահա այս վերջնոյն մահուամբ հեռաւոր ու մօտաւոր բոլոր ազգայինք անմխիթար ցաւոց մէջ կ'ընկղմին :

Սպարթալեան Յովհաննէս էֆէնտի և իւր ողբացեալ հարազատն իրենց փութաջան աշխատասիրութեան և սըրամտութեան շնորհիւ յաղքատութենէ ի փարթամութիւն բարձրացած, ի փորձոյ գիտէին աղքատութեան չարիքն և տգիտութեան աղէտն, ուստի աղքատին ապաւէն մը, — հիւանդանոց մը, — և աղքային մանկտուսն լուսաւորութեան վառարւսններ ընծայեցին :

Մեք չպիտի թուենք աստ այն մեծ ու փոքր նուիրատուութիւններն զորս աննախանձ և քրիստոնէական հեղութեամբ կը շուայլէին անխտիր ամեն ազգի աղքատաց և բարեգործական հաստատութեանց, երբ առիթը կը ներկայանար, չպիտի թուենք հանրութեան օգտին համար ըրած նիւթական զահողութիւններն և արկածելոց ի նպաստ կազմաւորեալ հանգանակութեանց մէջ իրենց ուշադրաւ մասնակցութիւնն, չպիտի թուենք Ս. Երուսաղէմայ պարտուց բարձման և Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցին վերաշինութեան համար ըրած ինքնայորդոր առաջարկներն և այն ծանօթ ու անծանօթ բարեգործութիւններն, որք զօգյեալ այսպիսի երկնազգեցիկ հոգիներու բերկրութիւնը կը կազմէին, զի Ձմիւռնիոյ մէջ կանգուն յաւէրժական յիշատակարաններն ըստ ինքեան բաւական են անմահացնելու նոցա յիշատակն դարուց ի դարս :

Շատ շուտ զրկուեցաւ Ազգն այսպիսի վեհանձն Բարերարներէ, որոց տարաժամ մահն զգալի պարապ մը կը թողու ազգային բարերարի իրաւամբ արժանացող ազգայնոց արդէն ցանցաւ չարքին մէջ :

Շատ շուտ զրկուեցան հիւանդք, աղքատք, որք և անկեալք՝ այսպիսի աննախանձ բարերարներու պաշտպանութենէն, և աղէտն աւելի անդարմանելի պիտի լինէր եթէ չլինէին Վսեմ հանգուցելոյն հարազատին ազնիւ զաւակունքն, որք անշուշտ որդիական մեծ առաքինութիւն մը պիտի համարին իրենց ողբացեալ հօր և հօրեղբօր օրինակելի շաւղին հեռեւի, և անոնց մարմնացումը լինելու Այս յոյսն այնքան աւելի կը քաջալերէ զմեզ, որքան գիտենք թէ սրտի ու մտաց ազնիւ դաստիարակութեամբ մը օժտուած են :

Ոչ ևս է մեծանուն Բարերարն, բայց իւր յիշատակն անջինջ բանդակուած է ամբողջ ազգի մը երախտագէտ

սրտին վրայ, յիշատակ անմոռաց, զոր դարերու ընթացքը
չպիտի կրնայ ջնջել :

Գնա՛, ո՛վ անմահ հոգիդ, Սպարթական գերդաստա-
նի թագն ու պսակ, Դու չես մեռած, այլ միշտ կենդա-
նի ես ի սիրտս համայն Հայկազանց, որք Կրթնադիտու-
թեան արտասուք վը թանան Զեր շիրիմն, որ փոխան հո-
ղոյ օրհնութեամբ կը լենայ, զի այս փակ է բաժին Զեզ
նման առաքինի և մարդասէր անձնաւորութեանց :

Խմբագրութիւնս իւր խորին ցաւակցութիւնը կը յայտ-
նէ յսպարթական աշնիւ գերդաստանին բոլոր անդամոց,
հայցելով յերկնից մխիթարութիւն :

Պոլսոյ Հայ հասարակութիւնը Երեքարթի օրէն ի վեր
տխրութեամբ համակեալ, երջանկայիշտակ բարերարին
մեծագործութիւնները իրեն խօսակցութեան նիւթ ընտ-
րած է :

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ

Ըստ հրահանգի Ազգ. Պատրիարքարանի, վաղը, (Կիւ-
րակէ) մայրաքաղաքիս Եկեղեցեաց մէջ հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ հոգւոյ մեծանուն
բարերարին :



Այն մարդը որ գեղեցիկ մտածմունք մը կը ծնի, արդէն լրացուցած կըլլայ իւր գոյութեան իղձը՝ որ է օգտակար ըլլալ։

Տը Ամսիէն

Բան մը չկայ այնչափ ազնիւ, փափուկ, մեծ և դիւ-
ցազնական, որչափ ճշմարիտ քրիստոսնէի մը սիրտը։

Ֆէնէլօն

Սիրտն ու խիղճը երջանկութեան ճշմարիտ աթոռներն են։

Նոյն

Առաքինութեան ամենամեծ սքանչելիքները՝ հայրեն-
ևաց սիրոյ արդիւնքն են։

Ժ. Ժ. Ռուսօ

Առաքինութիւնը մարդու ճշմարիտ բարիքն է և նա
միայն ճշմարտապէս մեծ և յարգելի կընէ զանի։

Ռօլէն

Կեանքն ըստ ինքեան բան մը չէ, իւր արժէքը իւր
գործածութենէն կախումն ունի։

Ֆէնէլօն

Բարեբար անունը՝ մեծամեծ պարագայից մէջ՝ մեծ
զգացումներէ ներշնչեալ գեղեցիկ գործերով կ'ստացուի։

Մամ. տը Սալմ

Ք Ա Ջ Ա Լ Ե Ր

Ա Ռ Ժ Ր Ա Ջ Ա Ն Հ Ն Ձ Ա Կ

Ամենայն ոք՝ որ մարդ ծնած
 Սուրբ տառերով միտքն է սրնած,
 Մեծ պարտք ունի նուիրական
 Քաջալեր տալ մարդոց գրական.
 Զի այդօրիկ պաշտօն ունին՝
 Քիրտ հոգիներ յար կրթելու,
 Յորս պատրաստել մեր խեղճ Ազգին,
 Զընտիր անդամս ընծայելու.

Կեցցեն ծառայք մեր ազգին,
 Անձնանուէրք թանկագին:

Այսօր ճակատ բաց, կրկին պարգերես,
 Այդ նուիրական պարտքդ կատարես.
 Քո Ե. հատորին թեւակոխելով,
 Շատ դժուարութեանց ջանիւք կը յաղթես,
 Ազգին սիւական այդպէս ծառայես.

Կեցցեն ծառայք մեր ազգին,
 Անձնանուէրք թանկագին:

Մըտօք անյողդ ողդ, գործով անվըհատ,
 Խըղճի խայթերէ դու ես միշտ ազատ,
 Զի ոմանց նման անձնականութիւն,
 Դու չես հարուածեր, այլ միշտ մոլութիւն
 Զաղկել ուխտած ես ի ըզգաստութիւն.

Կեցցեն ծառայք մեր ազգին,
 Անձնանուէրք թանկագին:

Քանի մեր Աստուած, Արեւ և Լուսին ,
 Կան ու կը մընան և միշտ պիտ' ապրին ,
 Թո՛ղ անոյշ ձայնըն ազնիւ Հնչակին
 Զարնէ՛ և թնդէ՛ խըլաց ականջին,
 Ըզ չարսըն ձաղկել և գովել բարին .
 Կեցցեն ծառայք մեր ազգին,
 Անձնանուէրք թանկագին :

Ուրեմն

Ես կոչում կընեմ մեր ժողովրդեան,
 Տալ քեզ քաջալեր որպէս և արժան .
 Կեցցեն ծառայք մեր ազգին,
 Անձնանուէրք թանկագին:

ԹԱԹՈՒԼ

Հնչակ . — Մեր շնորհակալութիւնն յայտնելով առ
 Մեծ. Թաթուլ էֆէնտի, Հնչակի ընթերցողաց հետաքրք-
 րութիւնը յագեցնելու համար միայն իւր թոյլտուութեամ-
 բը պատիւ ունիմք յայտարարել թէ, հանդիսիս մէջ ցարդ-
 տեսնուած Թաթուլ ստորագրութեամբ գրութեանց հեղի-
 նակն է Մեծ. Մանուէլ էֆէնտի Կ. Միլախորեան.



Զեկոյց . — Ի նշան Ազգային սգոյ, իմքագրութիւնս
 պարտք համարեց իւր այս աւուր թերթին մէջ չի դնել
 զաւելտական մասն :



Die erste Reise nach London war im Jahre 1784.
 Sie war die erste, die ich nach England machte.
 Ich war damals in London, als ich die
 erste Reise nach London machte.
 Ich war damals in London, als ich die
 erste Reise nach London machte.

1785

Die zweite Reise nach London war im Jahre 1785.
 Sie war die zweite, die ich nach England machte.
 Ich war damals in London, als ich die
 zweite Reise nach London machte.
 Ich war damals in London, als ich die
 zweite Reise nach London machte.

1786

Die dritte Reise nach London war im Jahre 1786.
 Sie war die dritte, die ich nach England machte.
 Ich war damals in London, als ich die
 dritte Reise nach London machte.
 Ich war damals in London, als ich die
 dritte Reise nach London machte.

Die vierte Reise nach London war im Jahre 1787.
 Sie war die vierte, die ich nach England machte.
 Ich war damals in London, als ich die
 vierte Reise nach London machte.
 Ich war damals in London, als ich die
 vierte Reise nach London machte.